կոսի՝ սասացիալ ի նոյն Գրիգորի աշակերտի նո-
ռին։ Ա.յգոյ խրատաւոր, եղաք նմանի, որ ցան-
կըն խակտի» եայլն՝ Ա.–Բ, որուն կը կցի
(Թղ. 184ա) «Գովեալ անուն Տեր Սրապիոն,
ուաբքի արագ, Գրիգորիոս կաթուղիկոս մեծ
պատրիարգ» եայլն՝ «Գրիգորի է բանս այս»
(Տաշեան, Մայր Ցուցակ, էջ 732)։

Կ. Պոլսոյ Ազգ. Մատենադարանին մէջ
(թիւ 133 ձեռագիր) ևս կը պահուի Հաւաք-
քածոյ մը, որուն մէջ կը կարդանք թէ
շարադրուած է «Ողբերգական բանիս երբ հե-
տեւակ այս է ձրիւ բանիւ եւ երբ ներչափական
տաղիւ ոգեալ, զառաջին, զնախադրական գիծն
հանդերձ վերջադասին փաղաղութեանցն, ըստ
ալփաբետից տառիցն արուեստաւորեալ, ի չնչին
եւ ի տգէս առնի Կեսարացոյ պիտակ անուամբ
Գրիգոր որջորջեալ, որ եւ կոչնամբ միայն վար-
դապետ անուանեալ, յարտարեալ չնչին բանիս»։

Ձեռագիրը գրուած է 1607 Դեկտ. 31ի
օրը Կեսարիոյ Ս. Սարգիս եկեղեցւոյն դու-
ռը։ Իսկ Երուսաղէմի Ս. Յակոբեանց մա-
տենադարանը կը գտնուի հաւաքածոյ մը
(Թ. 1042 գրչագիր), որ հաւաքում մըն է
ողբերու և ներբողեաններու, կայ հատուած
մը «Գրիգոր վրդ. Կեսարացւոյ, որ եկաց երիցս
պատրիարք Կ. Պոլսոյ եւ կայ թաղեալ ի Ղալա-
թիա, ներբողեան ի վերայ մահուան Սրապիոն
կաթողիկոս Ուռհայեցւոյ»։